Արձանագրություն N3

(նիստը կայացել է 2023թ. հոկտեմբերի 10 -ին)

Նիստին մասնակցում էին Արմավիրի մարզի «Մայիսյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ ծնողական խորհրդի 12 անդամներից 10-ը:

Օրակարգում՝

1. Օրակարգի հաստատում:

(զեկ.՝ Ա.Զաքարյան)

2. 2024թ. բյուջեի նախագծի քննարկում:

(զեկ.՝Հ. Մարգարյան)

3.«Ոսկե աշուն» համադպրոցական միջոցառման անցկացման մասին/հոկտ. 13/:

(զեկ.՝ Ա.Սահակյան)

Օրակարգում՝

1.Լսեցին- Ծնողական խորհրդի նախագահ Ա.Զաքարյանին: Նա ներկայացրեց օրակարգը:

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել միաձայն:

Օրակարգում՝

2024թ. բյուջեի նախագծի քննարկում (զեկ.՝Հ. Մարգարյան)

2.Լսեցին- դպրոցի հաշվապահ Հ.Մարգարյանի տեղեկատվությունը 2024թ. նախնական բյուջեի վերաբերյալ: Զեկուցող Հ.Մարգարյանը ներկայացրեց 2024թ. բյուջեի հետևյալ նախագիծը.

հոդված	անվանումը	նախահաշիվ
4111	Աշխատողների աշխատավարձ. ու հավելավճ.	82800000
4212	Էներգետիկ ծառայություններ	1700000
4213	Կոմունալ ծառայություններ	69000
4229	Այլ տրանսպորտային ծախսեր	170000
4232	Համակարգչային ծառայություններ	95000
4234	Տեղեկատվական ծառայություններ	24000
4241	Մասնագիտական ծառայություն	80000
4251	Շենք-ի ու կառույց-ի նորոգ. ու	250000

	պահպանում	
4252	**Մեքենան-ի ու սարքավ.-ի ընթ.նոր. ու պահպ.**	**50000**
4261	**Գրասենյակային նյութեր ու հագուստ**	**165000**
4266	**Առողջապահական լաբորատոր նյութ**	**30000**
4267	**Կենցաղային ու հանրային սննդի նյութեր**	**2700000**
	Ֆինանսավորում	**88133000**

Ծնողական խորհուրդը, լսելով և քննարկելով հաշվապահ Հ.Մարգարյանի ներկայացրած նախագիծը,

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հավանություն տալ 2024թ. վերոնշյալ բյուջեի նախագծին:

2.Խնդրել տնօրեն Ա.Սարուխանյանին և հաշվապահ Հ.Մարգարյանին դպրոցի նյութատեխնիկական բազան համալրելու և հարստացնելու համար 2024թ. բյուջեից հատկացումներ անել:

Օրակարգում՝

.«Ոսկե աշուն» համադպրոցական միջոցառման անցկացման մասին: (զեկ.՝ Ա. Սահակյան)

3. Լսեցին- դպրոցի տնօրենի ՄԿԱԳ տեղակալ Ա.Սահակյանի տեղեկատվությունը . «Ոսկե աշուն» համադպրոցական միջոցառման ծրագրի մասին: Նա ներկայացրեց . «Ոսկե աշուն» միջոցառման ծրագիրը՝ նշելով, որ այն նվիրված կլինի գրադարանի օրվան և ուսուցիչների տոնին: Նա հորդորեց ԾԽ անդամներին գործուն մասնակցություն ունենալ միջոցառմանը:

Լսելով և քննարկելով տեղեկատվությունը՝ ծնողական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել .«Ոսկե աշնան» ծրագիրը:

2. Դասարանական ծնողական խորհուրդներին մասնակից դարձնել միջոցառման կազմակերպչական աշխատանքներին:

Դպրոցի ծնողական խորհրդի նախագահ՝ Ա.Զաքարյան

քարտուղար՝ Ա.Մարգարյան